Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27 -ի N 1672 -Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության շտաբի պետ

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության պետ

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ

ՀՀ կառավարության աշխատակազմի ներկայացուցիչ

Հասարակական միավորումների 5 ներկայացուցիչներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27 -ի N 1672 -Ն որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կարգապահական հանձնաժողովի գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ոստիկանությունում մշտապես գործող մարմին է, որի նպատակը հավաքների անցկացման ժամանակ հասարակական կարգի պահպանությանը ներգրավված ոստիկանության ծառայողների կողմից կատարված կարգապահական կոպիտ խախտումների վերաբերյալ իրականացված ծառայողական քննության նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն է և նրանց գործողությունների իրավաչափության որոշումը:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կազմված է հանձնաժողովի նախագահից և տասն անդամից:

5. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նաև 5 հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Հանձնաժողովում հասարակական միավորումներից ներկայացուցիչներ ընդգրկելու վերաբերյալ ոստիկանության կողմից զանգվածային լրատվամիջոցներով տարածվում է հայտարարություն: Հասարակական միավորումներից ստացված թեկնածությունները քննարկվում են ոստիկանության և հաստատվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Հասարակական միավորումների կողմից ներկայացվող հայտերը ոստիկանության կողմից ընդունելու, քննարկելու, թեկնածուներին ընտրելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի (այսուհետ՝ ոստիկանության պետ) նորմատիվ հրամանով:

6. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը,

2) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և վարում դրանք,

3) կազմակերպում է հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները,

4) ստորագրում է հանձնաժողովի որոշումները, նրա գործունեությանը վերաբերող մյուս փաստաթղթերը:

7. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրա հանձնարարությամբ հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է հանձնաժողովի անդամներից մեկը:

8. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

9. Հանձնաժողովի նիստերի հրավիրման օրվա, վայրի և ժամանակի մասին հանձնաժողովի անդամները, կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողը և նրա անմիջական ղեկավարը ծանուցվում են հանձնաժողովի նիստից 3 օր առաջ:

10. Հանձնաժողովի նիստերի հետ կապված կազմակերպական աշխատանքներն իրականացվում են ոստիկանության լիազոր ստորաբաժանման կողմից: Ոստիկանության լիազոր ստորաբաժանումը սահմանվում է ոստիկանության պետի հրամանով:

11. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

12. Հանձնաժողովը քննության է առնում հավաքների ժամանակ հասարակական կարգի պահպանությանը ներգրավված ոստիկանության ծառայողների կողմից կատարված կարգապահական կոպիտ խախտումների առիթով իրականացված ծառայողական քննության նյութերը և դրա արդյունքներով կազմված եզրակացությունը՝ մինչև համապատասխան որոշում ընդունելու համար ծառայողական քննություն նշանակող անձին ներկայացնելը: Այդ նպատակով ոստիկանության լիազոր ստորաբաժանումը նախապատրաստում է համապատասխան տեղեկանք հանձնաժողովի անդամների համար:

13. Հանձնաժողովը կաշկանդված չէ ծառայողական քննության նյութերով և կարող է ծառայողական քննություն իրականացնող անձից սեփական նախաձեռնությամբ պահանջել լրացուցիչ մեղադրական փաստական տվյալներ, ինչպես նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կրկին լսել այլ անձանց բացատրությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից, հետազոտել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի կողմից լրացուցիչ ներկայացված փաստական տվյալները:

14. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 43.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստական հանգամանքները պարզելուց

հետո հանձնաժողովն ընդունում է օրենքի 43.1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումներից մեկը: Հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը միջնորդում է ոստիկանության պետին՝ ծառայողական քննության նյութերը նախաքննության մարմին ուղարկելու համար:

15. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է տվյալ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի համար:

16. Հանձնաժողովի որոշման պատճենը կամ դրանից քաղվածքը եռօրյա ժամկետում ուղարկվում է կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողին: Եթե որոշումը պարունակում է պետական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն, ապա ծառայողին ուղարկվում է որոշումից քաղվածք:

17. Հանձնաժողովի նիստերի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է հրապարակվում ոստիկանության պաշտոնական էլեկտրոնային կայքի միջոցով:

18. Յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 20-ը, ոստիկանության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրվում է հանձնաժողովի կողմից նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ